

ԿԱՐԾԻՔ

Գոռ Աշոտի Գալստյանի «Է-ԺՔ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից, «Եզրակացություններ», «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ», «Հավելված» բաժիններից: Ներածության մեջ, ինչպես և պատշաճում է ատենախոսական աշխատությանը, ներկայացված է թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, ատենախոսության ժամանակագրական սահմանները, հետազոտության մեթոդաբանական հիմքը, ատենախոսության գիտական նորույթը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, ատենախոսության փորձաքննությունը, ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Մասնավորաբար «Ատենախոսության գիտական նորույթը» բաժնում խոսվում է ուսումնասիրության եռակի նշանակության (տոմարագիտական, պատմաբանասիրական, աղբյուրագիտական) մասին: Այս երեք դաշտերի ընդգրկումով և անհրաժեշտ խտացումով հեղինակը ուրվագիծն է տալիս ատենախոսության գիտական նորույթ պարունակող պահերի: Ատենախոսության հեղինակը տոմարական եզրույթները հետախուզում է աղբյուրների, մասնագիտական գրականության ճիշտ և մտացի ընտրությամբ, ինչը թույլ է տալիս մասնավորաբար աղբյուրներում առկա տարաբնույթ փաստերի համադրության օգնությամբ հանգել հիմնականում ընդունելի եզրակացությունների:

Ա գլխում, հանձին Անանիա Շիրակացու աշխատությունների, վերհանվում է տոմարական գիտության վիճակը Է դարում: Այս գլխում լուսաբանվում են Է դարի հայոց տոմարի մեկնությունների առանձնահատկությունները: Ինչպես և վայել է հետազոտական աշխատություններին, հեղինակը նյութի ուսումնասիրությունը սկսում է գիտության տվյալ մարզը ներկայացնող մասնավոր եզրույթի («մեկնել»)

ստուգաբանությամբ: Բացատրում է մեկնողական ժանրի առաջացման նախադրյալները, նրա կարևորությունը ժամանակի մշակութային դաշտում: Այս մուտքից հետո ներկայացվում է Անանիա Շիրակացու տոմարական ժառանգությունը, որի բաղկացուցիչներն են «Յաղագս իննեւտասներեկի Լուսնի», «Լուսնացոյց» աղյուսակը, «ՇԼԲ բոլորակը», «Տոմարական պատառիկը», «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ», «Ի Զատկին Տեռան» և այլ երկեր: Հեղինակը չի մոռանում հիշատակել Շիրակացու տիեզերագիտական երկերը, որպիսիք են «Առ խոստացեալսն» աշխատությունն իր ընդարձակ և համառոտ տարբերակներով, «Յաղագս կենդանակերպաց», «Յաղագս շրջագայութեան երկնից» խորագրով միավորները: Գոռ Գալստյանը միանգամայն հասկանալիորեն կանգ է առնում հատկապես Շիրակացու մեկնողական ճառերի վրա: Նա զանազանում է տեսական, գործնական-կիրառական ընդհանուր խնդիրներ լուծող «Մեկնութիւն Տոմարի» բնագրերը Շիրակացու մեկնողական ճառերից, որոնք գերազանցապես նպատակ ունեն պարզելու մասնահատուկ խնդիրներ: Այդպիսիներից են Անանիա Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» և «Ի Զատկին Տեռան» ճառերը, որ ատենախոսի կողմից ենթարկվում են մասնագիտական հանգամանալից քննության: Ի մի բերելով իր խոսքն այս մեկնողական ճառերի վերաբերյալ՝ հեղինակն իրավացիորեն համարում է, որ Շիրակացին սրանց մեջ «լուծում է ինչպես համաքրիստոնեական կարևորագույն խնդիրներ, այնպես էլ նոր շունչ է հաղորդում տոմարի մեկնության ժանրին» (էջ 29):

Ատենախոսության Ա գլխի երրորդ ենթաբաժնում խոսվում է Գրիգոր Աբասյանի «Գիրք Պատճառաց»-ում ներկա Հայոց տոմարի նախակրթությունների մասին: Հրապարակի վրա եղած տոմարագիտական աշխատությունների լայն կիրառության միջոցով այստեղ առաջին անգամ քննության նյութ են դառնում «Գիրք Պատճառաց»-ում առկա տոմարական դիտումները, որոնք վերաբերում են Սուրբ Ծննդյան, Հայտնության տոնը հունվարի վեցին կատարելու, ինչպես նաև՝ Զատկի տոնին նախորդող Քառասնորդաց պահքի ժամանակ կիրառվող ընթերցումներին և հարակից այլ խնդիրների:

Ատենախոսության նույն գլխի չորրորդ ենթաբաժինը նվիրված է Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» աշխատության քննությանը:

Ատենախոսն այստեղ հարկ է համարում կանգ առնել Հայոց մեծ թվականի սահմանման, դրան հարակից բազմաբնույթ հարցերի լուսաբանման վերաբերյալ Անանիա Շիրակացու որդեգրած մոտեցումների վրա: Նա նկատում է, թե Շիրակացին տվյալ մեկնության մեջ «սահմանում է ոչ միայն թվականը, այլև դրա դրսևորումները՝ օլիմպիադը, ինդիկտիոնը, հոբեյանը, նոնոսն ու իդոսը» (էջ 52): Հետազոտողը մի առ մի վերլուծում է սրանցից յուրաքանչյուրը, ցույց տալիս դրանց ծագումը (հին հունական, աստվածաշնչական) և կիրառությունը: Այսպես, երևույթը առավել լիովին ընկալելի դարձնելու համար նա օլիմպիադի (Ժամանակի քառամյա փուլ) որոշման գործնական հաշվարկ է կատարում: Նա չի բավարարվում ներկայացնել միայն այդ երևույթի թվաբանական կողմը, այլև հարկ եղած դեպքում խոսում է դրանց հասարակական, հոգեբարոյական բովանդակության մասին:

Այստեղ տրվում է «Տոմար» բառի՝ Շիրակացու ստուգաբանությունը («Ժողով»): Աստվածաշնչական տեղիների ու տոմարական դիտումների հիման վրա՝ ատենախոսը դրա մեջ տեսնում է երկու հիմնական իմաստ՝ ա/ հավաքվել և բ/ խավարել: Առաջինն ունի զուտ տոմարական, աստղագիտական բնույթ, այն է՝ աստղերի մեկտեղումը, իսկ երկրորդը հարաբերվում է Տիրոջ խաչելության պահին արեգակի խավարման վերաբերյալ աստվածաշնչական տեղեկության հետ: Այսօրինակ բացատրությունը ատենախոսը հաստատում է Հակոբ Ղրիմեցուց բերված վկայության միջոցով, որն ինքյան ցույց է տալիս Շիրակացու երկասիրության ազդեցությունը: Այդ ազդեցության հետքերը մատնացույց են արվում Սամվել Անեցու «Մեկնութիւն տոմարի» երկում նմանապես:

Ատենախոսության այս ենթաբաժնում հեղինակը հարկ է համարում բացատրել «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» երկում կիրառված մի շարք եզրերի (կրկնակ, վերադիր, յոթներյակ, նահանջ) իմաստը: Երևույթի առավել հանգամանալից բացատրության համար նա դիմում է Շիրակացու «Տիեզերագիտութիւն եւ տոմար» երկի օգնությանը: Հարկ է գնահատանքով արձանագրել, որ հեղինակը տոմարական երևույթները չի բացատրում սուկ տոմարական իրողություններով, այլ դրանցից շատերը մեկնում է աստվածաբանության լույսի ներքո՝ համաձայն դարաշրջանի ընդհանուր մտայնության: Սրա առավել բնորոշ օրինակը յոթներյակի բացատրությունն է (էջ 70):

Շաբաթվա օրերը հիշատակելուց հետո ասվում է, թե «Այսքան անուանք նշանակեն զանաշխատ և զանշարժ էութիւն Արարչին. Վեցեակ ատուրք շարժեալ կամքն՝ ի գոյացուցանել զէակս և զժամանակս, Զ (6) ատուրքք անժամանակ հանգստեան էին և է (7) - երորդին դադարեալ»:

Գ. Գալստյանը կարևոր է համարում կանգ առնել «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» երկասիրության մի շարք բովանդակային առանձնահատկությունների վրա: Դրանցից առաջինը «կիսակ» հասկացությունն է, որ հարաբերվում է Լուսնի փուլերի պարբերաշրջանին, որ կես օրով պակաս է տոմարի լրիվ ամսից: Կիսակները որոշելու՝ Շիրակացու սահմանած կանոնը համեմատվում է Հովհաննես Սարկավազի սահմանումի հետ, որ տրված է նրա «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» երկի «Պատճէն տոմարի» գլխում, ուր տրված են ինչպես հոռմեական, այնպես էլ հայոց տոմարով կիսակի որոշման սահմանումները: Երևոյթն առավել առարկայորեն ներկայացնելու համար ատենախոսության հեղինակը ներկայացնում է ինչպես հայկական, այնպես էլ հոռմեական կիսակների իր հաշվարկի ցանկերը: Խոսելով «տասնիններեակ» երևոյթի մասին՝ ատենախոսը միանգամայն իրավացիորեն համարում է, որ Հովհաննես Սարկավազը առաջին խմբագիրն է Շիրակացու տասնիննամյա պարբերաշրջանի:

Ատենախոսության երկրորդ գլուխն ամբողջապես նվիրված է Հովհաննես Կոզեռնի տոմարական ժառանգությանը: Պատմագրական սակավաթիվ փաստերի հիման վրա փորձ է արվում տալ Կոզեռնի անցած ճանապարհի ընդհանուր պատկերը: Գ. Գալստյանը ներկայացնում է այն շարժառիթը, որը պատճառ է դարձել Կոզեռնի տոմարագիտական գործունեության: Իրիոնյան թյուր տոմարի պատճառով Քրիստոսի հարության օրը համապատասխանում էր հրեական Զատկին, ինչն արգելված էր տակավին Նիկիո տիեզերաժողովի կողմից: Սրա հետևանքով առաջ էր եկել ծոազատիկ երևոյթը, որ հանդիպել էր 1007 թվականին: Ի պատասխան Բյուզանդիայի կայսեր, Կոզեռնը, առաջնորդվելով Էսայան տոմարի տրամաբանությամբ, նրան է ուղարկում «Ծոազատիկ բացատրությունը», ինչը և մաս է կազմում նրա «Մեկնություն տոմարի»-ի, որն ամբողջապես մեզ չի հասել: Շ-եակ համակարգում շփոթ առաջացրած այս իրավիճակին արձագանքում է նաև Հովհաննես Սարկավազը: Ծոազատիկ հերքումը

բովանդակող երկերը ատենախոսի իրավացի դիտումով խթանել են ինչպես տոմարագիտության զարգացմանը, այնպես էլ Հայ եկեղեցու դավանական նկարագրի անաղարտության պահպանմանը: Թերևս, իբրև օրինաչափություն, տոմարի և դավանանքի հարաբերությունը ցույց տալու նպատակով Գալստյանը նկատում է, թե ծոազատկի թվականներից առաջինը (570 թ.) «կապված էր հայերի՝ քաղկեդոնականությունն ընդունելու ժամանակին» (էջ 106):

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում հեղինակը մասնավորաբար կանգ է առնում Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» երկասիրության վրա: Նա հանգամանալից ներկայացնում է խնդրո առարկա երկի, տարբեր ձեռագրերի հիման վրա, իրականացված հրատարակությունները, և արձանագրում երկու ձեռագրեր (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 5809, 8716), որոնք չեն օգտագործվել բնագրի կազմության մեջ: Այդ ձեռագրերի համեմատությունը թույլ է տալիս ատենախոսին նկատել, թե՛ «դրանց ուսումնասիրությունը ճշգրտում կհաղորդի բնագրային նյութի՝ առավել ճիշտ ըմբռնման և մեկնաբանման գործին» (էջ 96):

«Մեկնութիւն տոմարի» երկի քննության ընթացքում մասնահատուկ հետազոտման նյութ է դառնում Հայոց թվականը: Իրողության հանգամանալից, համաժամանակյա ուսումնասիրությունը հստակորեն ցույց է տալիս, որ Հայոց թվականի համար արձանագրելի են երկու սկիզբներ՝ 552-553 և 562 թթ.: Տոմարի մեկնություններում Կաթողիկոսների և արքաների աթոռակալության և գահակալության տարեթվերի մեջ նկատվող տարբերությունները, ինչպես նկատում է ատենախոսը, հետևանք են մեկնիչների շփոթ ընկալումների, որի պատճառով էլ ինչպես միջնադարում, այնպես էլ մեր օրերում կատարվել են անընդունելի թվագրումներ:

Ատենախոսության Երրորդ գլխում լուսաբանված են Հովհաննես Սարկավազի, Ստեփանոս Մեծրկա որդու և Սամվել Անեցու Տոմարի մեկնությունները: Գլխի առաջին ենթաբաժնում ներկայացվում է Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, ուր օրինակարգված է հայոց անշարժ տոմարը: Սա թվականության մի համակարգ էր, որի բաղադրիչ տարրերն են «ամիսները», «շաբաթագրերը», «տարեսկիզբը», «տանուտերը»: Ատենախոսը, նախքան բուն նյութին անցնելը, ամփոփ անդրադարձով դիտարկում է այն աղբյուրները (Աստվածաշունչ և մասնագիտական

գրականություն), որոնք հիմք են դարձել Սարկավագի համար անշարժացնել տոմարը: Նա հարկ է համարում արձանագրել այս երկի կառուցվածքի հետ կապված երկու մոտեցումներ, որոնցից մեկի համաձայն Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատությունը տոմարական տարբեր գրվածքների ժողովածու է, իսկ մյուսի համաձայն այդ երկը թեմայի ամբողջականությամբ թելադրված ձույլ մի ժողովածու է: Մասնավոր հիմնավորումով ատենախոսն առավել ընդունելի է համարում երկրորդ տարբերակը (էջ 126-127): Քննության են ենթարկված «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» երկասիրության ոչ բոլոր գլուխները, այլ՝ միայն չորսը: Վերհանված են դրանց ամենակարևոր, մասնագիտական նկատելի պահերը: Այսպես, ոչ պատահականորեն ատենախոսը կանգ է առնում վերադիրների մասին Սարկավագի սահմանած կանոնների պարզաբանման վրա: Նա նկատում է, որ սարկավագյան տոմարում «վերադիրների համակարգը ցույց է տալիս Լուսնի հասակը քաղոց 28-ին (հուլյան տոմարով՝ հունվարի 5-ին), իսկ Սարկավագադիր տոմարի հայոց շարքի տարեմուտը քաղոց 29-ն է՝ հունվարի 6-ը՝ Քրիստոսի Ծննդյան ու Հայտնության տոնի օրը, որը հայոց եկեղեցական տարեսկիզբն է»: Սրան հետևում է ատենախոսի միանգամայն օրինաչափ եզրակացությունը. «Փաստորեն, Հովհաննես Սարկավագը խմբագրել է Շ-եակի 2-րդ շրջապտույտի 10-րդ, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը՝ այն սահմանելով 11՝ հուլյան տոմարի համար, իսկ հայոց տոմարի համար՝ 16: Այսինքն՝ այն կանոնը հուշում է հասկանալ, թե այն որ օրվա պատկերն է և հատկապես որն է Հովհաննես Սարկավագի տոմարի օրացուցային տարեմուտը» (էջ 142-143):

Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում խոսվում է Ստեփանոս Մեծրկա որդու և Սամվել Անեցու «Մեկնութիւն տումարի» երկերի վերաբերյալ: Հենվելով Ստեփանոս Մեծրկա որդու՝ Լուսնի լրման 19-ամյակի, յոթներյակների, վերադիրների համակարգի վրա՝ ատենախոսը փորձում է վերականգնել նրա ստեղծած Զատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը (տե՛ս էջ 148-150): Նա բացառված չի համարում, որ Ստեփանոս Մեծրկա որդու ՇԼԲ-ամյա Զատկացուցակը իր մեջ բովանդակած լինի նաև «Տանուտեր»-ի, «Առաջավոր»-ի, «Բարեկենդան»-ի, «Պենտեկոստե»-ի, «Վարդավառ»-ի և այլնի վերաբերյալ կանոններ:

ԺԲ դարում կյանքի կոչված «Մեկնութիւն տոմարի» երկերը քննելիս ատենախոսը հանձն է առնում «անպայման անդրադարձ կատարել» Սամվել Անեցու համանուն երկին: Թեպետ այն խորագրված է «Մեկնութիւն տոմարի», սակայն այդ երկի միայն առաջին մասն է համապատասխանում խորագրին, իսկ մյուս մասը հիմնականում վերաբերում է տիեզերագիտությանը: Երկի «Վասն պատճենի հռոմայեցւոցն եւ վասն կրկնակաց եւ կիսակաց» բաժնում ատենախոսը ուշարժան է համարում պարսկերեն և արաբերեն մի շարք եզրույթների կիրառությունը:

Գլուխները եզրափակվում են մասնագիտական խտացում-ամփոփումներով, որոնցում հիմնականում ի մի են բերված տվյալ գլխի կարևոր արդյունքները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Պատշաճորեն գնահատելով կատարված աշխատանքը՝ հարկ են համարում ներկայացնել հետևյալ նկատառումները.

ա/ Յավոք Անանիա Շիրակացու ժառանգության ներկայացումը հայ հետագա մատենագրության մեջ զգալիորեն թերի է ներկայացված: Այսպես, լիովին անտեսված են ԺԱ դարի մատենագիր Անանիա Սանահնեցու «Հակաճառության» մեջ նրա «Ի Յայտնութիւն Տեառն», «Ի Զատկին Տեառն» ճառերից բերված ամբողջական հատվածների առկայության փաստը, ինչպես նաև՝ Հովհաննես Սարկավագի «Տոմարի մեկնության» մեջ և Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկում Հայկ նահապետի ուստրերի և դուստրերի անուններից ամսանունների ծագելու վերաբերյալ բերված զրույցը, որ կենցաղավարում է Շիրակացու «Տիեզերագիտութիւն եւ տոմար» աշխատության մեջ:

բ/ Կոստանդինոս կայսեր որդու անունն արձանագրված է «Կոստանդինոս» ձևով (էջ 82)՝ փոխանակ «Կոստանդինոս»:

գ/ Էջ 25-ում կարդում ենք. «Աբրահամյանը ... կազմել է «Տիեզերագիտություն եւ տոմար» երկը», մինչդեռ պատշաճ կլիներ արձանագրել. *կազմել է այդ երկի քննական բնագիրը կամ հրատարակել այդ երկը*:

դ/ Առկա են վրիպակներ. էջ 27, 46, 55, 56, 84, 125, 161 և այլուր:

Սակայն, նկատված թերությունները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսի կատարած մեծածավալ աշխատանքը: Ատենախոսության եզրակացությունները հիմնավոր են և փաստարկված: Հեղինակը կարողացել է հաջողությամբ իրականացնել ատենախոսության մեջ սահմանված նպատակը և լուծել առաջադրած խնդիրները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ Գոռ Աշոտի Գալստյանի «**Է-ԺՔ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)**» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Թ. 00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ: Ուստի, միջնորդում եմ ԵՊՀ Կրոնագիտության 068 գիտական խորհրդի հարգարժան անդամներին՝ Գ. Գալստյանին շնորհելու իր հայցած գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ աստվածաբանության
և հայ եկեղեցու պատմության
ամբիոնի վարիչ

փ.գ.դ. Հ. Քյոսեյան
անուն-ազգանուն



ստորագրություն

Հակոբ Քյոսեյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար



Վահագն Մկրտչյան
անուն-ազգանուն


ստորագրություն

04.06.2024 թ.